Digitally signed by
DAVIT JAVADYAN 2714960197
Date: 20.04.2026 00:45:24

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
18.04.2026 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
հասարակական կազմակերպության 2025 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝			
1.1 Լրիվ անվանումը			«ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
1.2 ՀՎՀՀ-ն			02694886
1.3 Գտնվելու վայրը			ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ Փ. 21/1 ԲՆ. 5
1.4 Պետական գրանցման համարը			211.171.1065959
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը			2019-03-28
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)			+(374)10123456
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը			www.mlri.org.am
1.8 Էլեկտրոնային փոստը			SIRUN_AVETISYAN@MAIL.ru
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝			
Անունը	Ազգանունը		Պաշտոնը
ԱՐԹՈՒՐ	ԳՐԻԳՈՐՅԱՆ		
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը			
Կազմակերպության գործունեության առարկան է՝ օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցել հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների իրականացմանը:			
Կազմակերպության գործունեության նպատակներն են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝			
հանքարդյունաբերության օրենսդրության ոլորտում իրականացնել գիտական, հետազոտական, վերլուծական աշխատանքներ			
ներկայացնել առաջարկներ հանքարդյունաբերության օրենսդրության ոլորտի անհրաժեշտ բարեփոխումների, առկա բացերը վերացնելու վերաբերյալ			
շահագրգիռ կողմերին տրամադրել անհրաժեշտ աջակցություն և խորհրդատվություն			
աջակցել հանքարդյունաբերության օրենսդրության ոլորտի քաղաքականության, հանրային կրթության համակարգի զարգացմանը			
իրականացնել ջատագովություն, նախաձեռնել տեղեկատվական արշավներ հեռուստառադիո հաղորդումների, հրապարակումների, սեմինարների, գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպելու միջոցով			
իրականացնել սոցիոլոգիական հետազոտություններ և մոնիտորինգ՝ հանքարդյունաբերության օրենսդրության ոլորտի խնդիրները, դրանք ծնող պատճառները, հետևանքները և տարածվածության պատկերն ուսումնասիրելու նպատակով			
իրականացնել դասընթացներ, կլոր սեղաններ, հանրային քննարկումներ հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների հիմնախնդիրների վերաբերյալ			
ապահովել հանքարդյունաբերության օրենսդրության ոլորտի նորմատիվ իրավական ակտերի հասանելիությունը հասարակության անդամների համար			
նպաստել սփյուռքի և Հայաստանի Հանրապետության միջև ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված երկխոսության, համագործակցության, համատեղ ծրագրերի իրականացմանը			
համագործակցել հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների օրակարգով զբաղվող ներպետական և միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների հետ:			
4 Հասարակական կազմակերպության՝			
4.1 Անդամների թիվը			2
4.2 Կամավորների թիվը			
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը			0

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը

1	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության օրենքին վեաբերող 2 ենթաօրենսդրական ակտերի բարեփոխումներամշակում	ք.Երևան	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման օրենքի արդյունավետ գործունեության ապահովում	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1					

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	19,100,000
8.2 Գույքը	
Ընդամենը	0

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1		
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	0	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	19,644,138
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		19,644,138

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		0

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____0_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2019թ-ի մարտի 12

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ՆԱԽԱԳԱՀ՝

Մանասէ Վարանդ Մկրտիչեան

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԿՈՂՄԻՑ

<< 28 >> Մարտ 2019թ.

Գրանցման համար

211.171.1065959

Հարկ վճարողի հաշվառման համար

02694886

05

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ>>

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2019թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2 Կազմակերպությունը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.4 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5 Կազմակերպության լրիվ անվանումն է՝ «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների կենտրոն» հասարակական կազմակերպություն:

1.6 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, քաղաք Երևան, Թումանյան 21/1 շենք, բնակարան 5, էլեկտրոնային փոստի հասցե՝ varant.meguerditchian@gmail.com:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպության գործունեության առարկան է՝ օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցել հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների իրականացմանը:

2.2 Կազմակերպության գործունեության նպատակներն են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝

- հանքարդյունաբերության օրենսդրության ոլորտում իրականացնել գիտական, հետազոտական, վերլուծական աշխատանքներ,
- ներկայացնել առաջարկներ հանքարդյունաբերության օրենսդրության ոլորտի անհրաժեշտ բարեփոխումների, առկա բացերը վերացնելու վերաբերյալ,
- շահագրգիռ կողմերին տրամադրել անհրաժեշտ աջակցություն և խորհրդատվություն,
- աջակցել հանքարդյունաբերության օրենսդրության ոլորտի քաղաքականության, հանրային կրթության համակարգի զարգացմանը,
- իրականացնել ջատագովություն, նախաձեռնել տեղեկատվական արշավներ հեռուստառադիո հաղորդումների, հրապարակումների, սեմինարների, գիտաժողովների և այլ միջոցառումներ կազմակերպելու միջոցով,

- իրականացնել սոցիոլոգիական հետազոտություններ և մոնիտորինգ՝ հանքարդյունաբերության օրենսդրության ոլորտի խնդիրները, դրանք ծնող պատճառները, հետևանքները և տարածվածության պատկերն ուսումնասիրելու նպատակով,
- իրականացնել դասընթացներ, կլոր սեղաններ, հանրային քննարկումներ հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների հիմնախնդիրների վերաբերյալ,
- ապահովել հանքարդյունաբերության օրենսդրության ոլորտի նորմատիվ իրավական ակտերի հասանելիությունը հասարակության անդամների համար,
- նպաստել սփյուռքի և Հայաստանի Հանրապետության միջև ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված երկխոսության, համագործակցության, համատեղ ծրագրերի իրականացմանը,
- համագործակցել հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների օրակարգով զբաղվող ներպետական և միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների հետ:

2.3 Կազմակերպությունը կարող է իրականացնել նաև սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

2.4 Իր խնդիրներն ու նպատակներն իրականացնելու համար Կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

2.5 Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալու նրա մասնակից:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքով սահմանված կարգով Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը:

3.2 Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին:

3.3 Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Նախագահը՝ սույն Կանոնադրության հիման վրա:

3.4 Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Նախագահի որոշմամբ:

3.5 Իրավաբանական անձը Կազմակերպության անդամ է դառնում և դուրս է գալիս կազմակերպության անդամությունից իր իրավասու մարմնի որոշման և դիմումի հիման վրա՝ Կազմակերպության Նախագահի որոշմամբ:

3.6 Կազմակերպության անդամների համար անդամավճար չի սահմանվում:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա) մասնակցել Կազմակերպության կառավարման մարմինների ընտրություններին,
բ) ներկա լինել Ժողովին անձամբ,
գ) առաջնահերթության կարգով և անվճար հիմունքներով օգտվել Կազմակերպության ծառայություններից.
դ) ծանոթանալ Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,
ե) Կազմակերպությունից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեներ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ աուդիտորի եզրակացության պատճեն՝ վերջին 3 տարիների վերաբերյալ:
զ) Կազմակերպության բարձրագույն մարմնին կամ դատական կարգով բողոքարկել իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ Կազմակերպության մարմինների որոշումները.
է) մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,
ը) իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

4.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա) հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին,

բ) կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, կառավարման մարմինների որոշումները,

գ) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները:

4.3 Կազմակերպության կանոնադրությունը խախտելու կամ իր պարտականությունները չկատարելու դեպքում Կազմակերպության անդամի նկատմամբ Կազմակերպության նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

ա) իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,

բ) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,

գ) տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին,

դ) կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ,

ե) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

զ) համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ,

է) իր անվամբ ունենալու կնիք՝ հայերեն և անգլերեն լեզուներով, դրոշմ և խորհրդանիշ,

ը) օրենքով սահմանված կարգով Կազմակերպության աշխատանքներում ներգրավել կամավորների:

թ) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

5.2 Կազմակերպությունը պարտավոր է՝

ա) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,

բ) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը,

գ) Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը,

դ) Կազմակերպության գտնվելու վայրի փոփոխության դեպքում իրավաբանական անձանց պետական գրանցման մարմնին պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել,
ե) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել իրավաբանական անձանց պետական գրանցման մարմնին,
զ) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են ժողովը և գործադիր մարմինը՝ Նախագահը:
6.2 Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:
6.3 Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և վայրը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 20 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:
6.4 Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է Նախագահի կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:
Արտահերթ ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

6.5 Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝
ա) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
բ) այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,
գ) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) կամ հիմնարկներ ստեղծելու, դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,

դ) Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,
ե) Կազմակերպության նախագահի ընտրությունը և փոփոխումը,
զ)Կազմակերպության նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,
է) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը,
ը) Կազմակերպության ռազմավարության հաստատումը,
թ) հինգ տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,
ժ) Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,
ի) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
լ) Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,
խ) օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

6.6 Կազմակերպության ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են Ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:

6.7 Կազմակերպության նախագահն ընտրվում է Ժողովի կողմից 5 տարի ժամկետով: Կազմակերպության գործադիր մարմինը Կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը և վարում է Ժողովի նիստերը:

6.8 Կազմակերպության նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

6.9 Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝
ա) ապահովում է Ժողովի որոշումների կատարումը,
բ) մինչև հինգ միլիոն ՀՀ դրամ արժողությամբ ցանկացած գույք միանձնյա, իսկ հինգ միլիոն ՀՀ դրամից ավելի արժողությամբ ցանկացած գույքի դեպքում Ժողովի հետ համաձայնեցնելով տնօրինում և կառավարում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

գ) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
դ) տալիս է լիազորագրեր,
ե) բանկերում բացում է հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
զ) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
է) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,
ը) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,
թ) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,
ժ) ընդունում է Կազմակերպության անդամ և Կազմակերպությունից հեռացնում է անդամին,
ի) հաստատում է Ժողովի գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք 5 տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը,
լ) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:
6.10 Նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:
6.11 Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
7.2 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:
7.3 Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

- Կազմակերպության անդամների ներդրումները,
- Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

- իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները,
- դրամական մուտքերը պետական բյուջեից,
- նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,
- հանգանակությունները,
- օրենքով չարգելված այլ միջոցներ:

7.4 Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

8.1 Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

8.2 Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

8.3 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է 12. 03.2019 թ. և բաղկացած է 9 թերթից

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 19.04.2026 17:23